

ՋԻԻՆ ՋՄԵՌՆ

Գրեց՝ Ն. ԱՂԲԱԼԵԱՆ

Կ. Բրուզման մեր «ձիւն» բառը կշռում է մի շարք օտար բառերի հետ, որ «ձմեռն» են նշանակում (Տես Gramm. Comp. էջ 165) :

Եթէ օտարի «ձմեռը» մեղ համար «ձիւն» է դարձած՝ անհնարին չէ, որ մեր իսկ լեզուի մէջ այդ երկու բառերն արմատակից լինին :

Ա. Մէյէ նկատում է թէ իսկապէս «ամէն մի բառ իր պատմութիւնն ունի» (Introduction էջ 14) : Ես մտադիր եմ մեր «ձիւն» ու «ձմեռն» բառերի «պատմութիւնն» անել, եւ ցոյց տալ, որ նրանք արմատակից են : Միտամանակ ես պիտի պարզեմ մի քանի յարակից լեզուական երեւոյթներ :

* * *

«Ջիւն» բառի սեռականն է «ձեան», իսկ «ձմեռն» բառինը՝ «ձմերան» : Ժողովուրդն արտաբերում է «ձմեռ», թէև բարդութեանց մէջ պահում է «ձմեռն» . օրինակ՝ «ձմեռնամուս» : Աշխարհարարի մէջ «ձմեռն» բառը տալիս է տարատեսակ սեռականներ . ձմեռուայ, ձմեռուան, ձմռան, ձմեռան : Հին բարդութեանց մէջ այս բառը մտնում է երկու ձևով, իբր «ձմեռն» եւ «ձմեր», այսպէս՝ ձմեռնական, ձմեռնային եւ ձմերական, ձմերային, ձմերոց : Բառի բուն ձեւն անշուշտ «*ձմերն» է, ինչ հարեւանութիւնն է պատճառ, որ արմատական ր-ն դարձած է ո :

Ի՞նչ են եղած «ձիւն» ու «ձմեռն» բառերի նախաւոր ձևերը : Մեր «ձմեռն» բառի «ձմ» դուզածայնի մէջ անկասկած սղած է մի հին ձայնաւոր : Հիմնուելով օտար համարժէքների վրայ, մենք կարող ենք ասել թէ այդ ձայնաւորն եղած է մի վաղեմի ի . (համ. հ. սլ. Zima. սնսկ. hima-s լատ. hiems, գենդ, Zima) Ուրեմն մեր բառը կարող ենք վերականգնել իբր «*ձիմեռն» : Վերջին ծածուկ վանկի մէջ թմբած է մի հին ձայնաւոր, որ երեւում է սեռականի մէջ եւ է ա : Ռ-ին իր նախաւոր արժէքը տալով՝ մենք կարող ենք վերակազմել բառի հին ձեւն իբր «ձիմերան» : Այս ձեւի մէջ

եր ես համարում եմ մի վաղեմի իա :

Յետագային կը տեսնենք, որ իրօք այդպէս է : Հաշուի առնելով այս հանդամանքը, մենք կարող ենք մեր «ձմեռն» բառը մի նոր ձևով վերականգնել, իբր «ձիմիարան» : Այս հնադոյն ձևը իբր քառավանկ բառ՝ կարծում եմ երկու շեշտ ունէր այս տարագով՝ -' -' -' . ձիմիարան : Այս շեշտադրութեան հետեւանքով անշեշտ ի-ն զօղուած է հետեւորդ եւ զօրեղայէս շեշտուած ա-ի հետ եւ տուած է ն, որով բառը դարձած է եռավանկ իբր «ձիմե'րան» : Ինչպէս նախորդ, նոյնպէս էլ այս ձեւի մէջ շեշտերը համազօր շեն եղած . երկրորդը շատ աւելի զօրեղ էր քան առաջինը : Եռավանկ դառնալուց յետոյ բառը շեշտուած է եռավանկ բառերի շեշտադրական տարագներից մէկի համեմատ որ է -' -' -' ձիմե'րան :

Այս շեշտադրութեան հետեւանքով բառի առաջին եւ վերջին ձայնաւորները սղած են եւ բառը դարձած է «ձմե'րն», ինչ որ նրա դասական եւ այսօրուան արտասանութիւնն է :

Ս. Մեսրոպ հրահանգած չէ ծածուկ վանկերի ը-երը գրել ուստի բառն արտաբերում է վերի ձևով, բայց գրած են եւ զրում են «ձմեռն» :

Մեր վերականգնած հնադոյն ձևը, որ է «ձիմիարան», ես բաժնում եմ երկու մասի, իբր . «ձիմի-արան» :

Այս մասերից առաջինը ես համարում եմ ածանցաւոր կազմութիւն . յետոյ կը տեսնենք, որ իրօք այդպէս է : Մենք կ'ունենանք ուրեմն «ձիմ-ի» : Բառի միւս մասը նոյնպէս բաղադրեալ է . նա կազմուած է «ար» արմատից եւ «ան» ածանցից :

Այսպիսով «ձմեռն» բառը անդամատելով՝ կը ստանանք «ձիմ-ի-ար-ան», ուր «ձիմ» այդ բառի արմատներից մէկն է, միւս արմատն է «ար» եւ ուրեմն «ձմեռն» մի հին բարդ բառ է, որ ամփոփուած է ժամանակի ընթացքին եւ նախ քան գրերի գիւտը :